



46. ԻՆՉ ՈՐ ՑԱՆԵՍ, ԸՆ ԷԼ ԿՃՆՁԵՍ

ՀՅՈՒՈՄ ա, շիլնում մի լաշառ, անդգամ հարս։ Օրեն մի օրը էդ հարսի կեսուրը հիվանդանում ա, տեղով-բարձով թեք ընկնում։ Էդ կեսոր սիրտը խորոված ա ուզում։

Կանչում ա հարսին։ — Ա՛ղջի, — ասում ա, — սիրտս խորոված ա ուզում, ի՞նչ կըլնի՝ էթաս մի քանի թիքա խորոված անես, բերես ուտեմ։

Հարսն ա՝ ջուղար չի տալի, փնթինթալոն, թոնթորալոն դուս ա գալի քոչեն, առվիցը մի քանի գորտ ա բռնում, բերում խրում շամ- փուրը, լավ-լազաթին խորովում, եննա քաշում հացի վրեն, տանում դնում կեսոր աղաքը։ Խեղճ կեսուրը մի կտոր վեր ա ունում ուտում, տենում ա՝ գորտի միս ա։

— Ա՛յ որդի, — ասում ա, — ինձ գորտի միս ուտացրիր, բան չկա. ասսանից եմ խնդրե՝ քե՛զ էլ փոխ ըլնի, թիքումդ գտնվի։

Ասում ա՝ ֆողին տալի։

Անց ա կենում մի վախտ՝ մի տարի, էրկու տարի, իրեք տարի, էդ անդգամ հարսը մի հասած տղա ա ունենում, բերում ա, դրան պսակում։ Դրան մի շատ խոնար, ասսու գառը հարս ա ուսստ գալի։

Օրեն մի օրը էդ կեսուրը սաթլչամ ա ըլնում, հիվանդանում, տեղով-բարձով թեք ընկնում։ Հարսը կեսոր յորդան-դոշակի կշտի- ցը չէր հեռանում՝ դշեր, ցերեկ մուղաթ էր կենում, ի՞նչ ուզում էր,

ալրիալը էթում էր բերում, է՛ս տալի, է՛ն տալի, դեղ խմացնում, շորվա անում, ուստացնում, մախլաս, գլխներդ ինչ ցավացնեմ, հիվանդ ա էլի՛, ինչ սիրտն ուզում էր՝ ալրւատի վաղում էր բերում:

Օրեն մի օրը էղ կեսոր սիրտն էլ ա խորոված ուզում:

Կանշում ա հարսին.— Ա՛ղջի— ասում ա, — սիրտս խորոված ա ուզում. ի՛նչ կըլնի՛ էթաս մի քանի թիքա խորոված անես, բերես՝ ուտեմ:

— Ա՛շքիս վրեն,— ասում ա հարսը:

Էթում ա էն սճաթը մարդին դրկում բաղար, մի լավ¹ սուկի առնիլ տալի, բերում կոտորում², սոխը վրեն շրթմիշ անում³, էթում շամփուրը բերում, շարում, տանում քաշ անում թունդիրը, որ խորովի: Մի քանի հետ շուտե-շուտ ա տալի, որ շէրվի, եննա հանում ա՝ տեհա էփել ա, թե չէ: Հանում ա... ի՛նչ տենում՝ խորովածացում քոմմա գորտ ա դառե: Շամփուրը ձեռին մնում ա սառած կաննած, չի իմանում՝ էս ի՛նչ բաս ա:

Բերում ա էղ խորոված գորտերը շամփորի վրիցը քաշում, դեն ածում, թաղաղան մարդին դրկում, սովի բերիլ տալի, խորովում, շամփորի վրեն շարում, կախ տալի թունդիրը: Մի թիլ կենում ա, հանում ա, տենում՝ էլի գորտ ա դառե:

Որ շատ ետանում ա, կեսուրը ընդիան ձեն ա տալի.— Ա՛ղջի,— ասում ա, — ի՛նչ էլար, թե՛ղ արա խորովածը բե՛, է՛:

Հարսը թողում ա, գալի կեսոր կուշտը:

— Ա՛յ, նանի, — ասում ա, — բա շես ասի՛ ըսե՛նց, ըսե՛նց բան, խորովածացուն ինչքամ շարում եմ՝ գորտ ա դառնում: Չեմ իմանում է՛ս ինչ բաս ա:

Կեսուրը ալրիալը գլխի ա ընկնում, թե բանն ընշումն ա:

— Գնա՛ բե, ա՛յ որդի, — ասում ա, — գնա՛ բե. տվել եմ, պաի առնեմ:

Դրուստ ա ասած. «Ինչ որ ցանես՝ ըն էլ կհնձեսա:

¹ Տպագիր տեքստում հաջորդում է՝ ոշխարի, որը չնշված է բանահավաքի ձեռքով (Ս. 4.):

² Տպագիր տեքստում՝ «սուկին խօրովում», ուղղումը բանահավաքինն է (Ս. 4.):

³ Մանրացնում (Ս. 8.): «Սոխը վրեն շրթմիշ անում» արտահայտությունը տպագիր տեքստում բանահավաքի ձեռքով չնշված է. պահպանել ենք տպագիր տեքստում եղածը (Ս. 4.):